

ՈՒՐԻՇ ՆՈՐ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՔԻՒՐԳԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ.

(Քիւրդերը ոչ իբր արեւակցական՝ այլ քաղաքական հասարակութիւն. իրենց տարածել կազմութիւնը թէ՛ իբր հասարակութիւն եւ թէ՛ իբր ցեղ ցեղ. աւագակաքարոյ յասկութիւնները. կենդանական մարդու եւ վայրենի մարդու կազմի խառնուրդ մը, եւ Քիւրդական տիպի վերամշակումը իբր բնական քաղաքութիւն. բոլոր զանազան ցեղերը համատեւ եւ տարածել «Քիւրդ» անունը տալ: Անոնց տարածականութիւնը.)

Ըստ մեր գծած ուղղութեանը՝ մինչեւ հիմա մենք որոնեցինք Քիւրդերու արեւակցական, ազգագրական կապերը, որ կը ներկայացնեն արեւակցական հասարակութիւն մը. այժմ կը փնտռենք երկրորդը, լոկ Քաղաքական հասարակութեան մը կազմակերպութիւնը, որ հիմնուած է մէկ հողի վրայ բնակացութեան սկզբունքէն, որ հունի արեւակցական ժառանգականութիւն մը, այլ տարածներու համամարում մը: Տեսակէտներու այս երկրորդին կը մօտենայ Վիթալ Քիւնէ, իր «La Turquie d'Asie. Géographie Administrative, statistique, descriptive en raisonnée de l'Asie Mineure. 1892 — Paris» հրատարակութեամբ:

«Քիւրդ անունը կը նշանակէ «Քարտ լեռներու բնակիչներ». բարձր լեռներ՝ որ կ'եզերեն Քիւրդիտանը արեւմուտքէն եւ հիւսիսէն, եւ որոնց գագաթներու վրայ Քաղթական աւանդութիւնը բնդունուած «Կուրանէն», կը կամենայ որ Նոյի տապանը այնտեղ հանգստացած ըլլայ, (*) Քաղթեացիները այս

(*) Ըստ Ասորական պատմագիրներու՝ այդ լեռան անունը Սարաբատ է, ու գիւղաքաղաքինը Թմիւնի (կամ Թիւնի, Թըմնիս), որ կը նշանակէ «այստեղի մէջ ութ հոգի ելան տապանէն».

(Այլեւ, Հին հաւատք կամ հեթանոս. կրօնք Հայոց, Երես 57):

Թըմնիս այժմեայ Տինիսն է, Վանի Մոկի շրջանը, ուր կը բնակին լեռնական Քիւրդեր: